Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի <<Վերին Սասնաշենի Մարտուն Մանուկյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝
- Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձեւ 5),
Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա-ںացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 3-ից մինչեւ ապրիլի14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. ապրիլի 20-ին ժամը 14:00-ին,** Վերին Սասնաշենի Մարտուն Մանուկյանի անվան հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Վերին Սասնաշեն բնակավայր, 1-ին փողոց, շենք՝ 35:

Տեղեկությունների համար զանգահարել 077 32-28-80, 055 32-28-80 հեռախոսահամարներով: